ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մայիսի 15-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի հունիսի 22-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (1-ին չափաբաժնի մասով՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և 2-րդ չափաբաժնի մասով՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով):

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 15.05.2023թ. N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 22 » « 06 » 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ղ. Բարիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 15.05.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների 1-ին չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված առավելագույն գնից՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամից, ծառայությունների մատուցման համար նախատեսված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և 2-րդ չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված առավելագույն գնից՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամից, ծառայությունների մատուցման համար նախատեսված 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝

- Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են 15.05.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 27/1
ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1510032345990100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ղ. Բարիկյան

/ստորագրություն/Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » « 06 » 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
«15» «05» 2023թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/512	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	-	-	500 000	500 000	500 000	500 000	500 000	500 000	**500 000**
2	50311120/513	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	-	-	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	**1 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 25շ., բն.6
Գործ. հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 27/1
ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1510032345990100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ղ. Բարիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.